36. ՊՐՈՖԵՍՈՐԵՆ ՔՈ̈ՒՐԸ

Ինիս ա, չինիս մին Թաքավեր, ըտրա ինիս ա մին տղա։ Էտ տղան վեր մծընաս ա, ո̈ւղիս ըն վեր մին գիգոթուն սվըրցնին։

Թաքավերը մըլըհաթ ա ընես, վեր տղան ղարկե օրիշ երգյիր, ընդեղ կրթվե, ըտրա կնեդյը թուղես չի։ Թաքավերը մին պրոֆեսոր ա պիրիլ տաս, տանը տղեն կրթըցնելի հետե։

Մին քանե տարանը ետը, էտ տղան ո̈ւրա̈ն վարժարեդին կյը-րերըմը մին նկար ա տըսնաս, յրան հյըլ-մայիլ տռնաս, հիվընդնաս։ Իրեք օր տանան տո̈ռնը չի տո̈ւս կյաս, վեչ հաց ա ուտես, վեչ ճո̈ւր ա խմես։

Թաքավերը նան Թաքուհին ո̈ւրա̈նց երգյիրըմը դոխտուր, հա̈-քյիմ, պեն չըն թուղես, լոխճին պիրիս ըն պալատ, ամմա վեչ մինը կըրես չի, թա̈ էտ տղեն ցավը գյիդա̈։

Վերչը մին պառավ կյաս ա, թա.— Ցըես կգյիդամ ըտրա ցավը, թող կացեք կյա իմ կոշտըս, պեն ըմ ըսըլական։

Էտ տըղան կըրես չի քյինա̈, թո̈ւլ ա ինիս։ Էտ տղեն հընգերը վեր կյաս ա պռավեն կոշտը, պառավը ըտրան ըղըկես ա էն տղեն կոշտը, ըն էլ տանան հա̈լա̈ տո̈ւս չի եկալ, նկարը տեսած օրան։

Հնգերը վեր քյինիս ա կոշտը էտ տղան ետ ա տըռնաս, թա. —Ա՛ հընգյեր, պա ասե՞լ չը՞ս, էս ա իրեք օր ա սիրահարված, մըեռ-նըմ, խե կյա՞ս չըս ինձանավ ընցնիս։

Հընգյերը կյաս ա պռավեն ըսես, պառավըն էլ քյնիս ա Թաքա-

վերեն ըսես։ Թաքավերը էն պրոֆեսորեն ծեն ա տաս, նկարը տուս օնել տաս, թա.— էտ հո՞ւր նկար ա։

Պրոֆեսորը ըսես ա.— Իմ քվեր նկարն ա։

Թաքավերը ըսես ա, դե քու քվեր պիտի տղես հետե օզիմ։

Պրոֆեսորը ռազի յա կընաս։

Թաքավերեն պլատրմը վեզիրներան մինն էլ ա ըշկըտրած ինիս, թա ուրան ախճիգյը տա թաքավերեն տըղեն։ Էտ պենը վեր ըսկընաս ա, ուղիս ա վեր խընգարե։

Կյաս ա թաքավերեն սըտըսոտ պեներ ա խարար տաս։

Թաքավերը պրոֆեսորեն կըպուտես ա, թա.— Քու քվեր անըմ վեր պեն կա՞, խե՞ ինձ ասալ չըս։

Պրոֆեսորը ըսես ա.— Դե տրա ասողը թող մին նշան պիրի, հվատամ։

Էտ վեզիրը եր ա կընաս ամմեն հինչան յոր ունես, օղտերը պըռնես, թա տանե ռուշվաթ տա, վեր էն ըխճըկանան մին նշան պիրին։

Պրոֆեսորեն քուրը կնաս ա ընիս մին օխտը ըտժանե տան կըլխե։ Օխտը ըտաժումը ըտրա կոշտը քյինիս ա ընիս ուրան ախպերը մին թաքուն, օրիշ մղակավ։

Էլ ղուշ, ղասաթ ընդրա կոշտը քյեցած չի հալա։ Էտ ախճիգյը մին օր եր ա կընաս, տսնաս ուրան տատը եկած կոշտը։ Ըսես ա.— Հո՞ր ըս եկալ։

Տատը թա.— Եկալ ըմ կլոխըտ լվանամ։

Տու մել ասել էտ վեզիրը պռավեն ռուշվաթ տված կինի մին չվալ վրեսկե, թա.— Թոռանըտ անա մին նշան պե՞ր։

Տատըն էլ կքյինի թոռանը կոշտը, թա.— Եկալ ըմ կլոխըտ լվանամ։

Կլոխը լվանում տեղը մուտանան յոր կօնե, տուս կյա, պիրի տա վեզիրին։ Էտ վեզիրն էլ կպիրի թաքավերեն տա։

Թաքավերն էլ ծեն կտա պրոֆեսորեն, թա.— Պիտի քյըեզ սպանիմ, վեր ինձ խափալ ըս։

Պրոֆեսորը ռազի յա կենըմ։ Դե էլ հի՞նչ անե ընդրանա ետը։

Էտ ախճիգյը վեր տսնաս ա մտանան կա վուշ, ուրան պենը գյիդաս ա։ Եր ա կնաս տղու շորեր կյնաս, քյինիս թաքավերեն պալատը, հարցըփորձ ընես, տսնաս լոխ տուս եկած թմաշա, վեր պիտի պրոֆեսորեն կախաղան տան։

Վեր տըսնաս ա, հինչու հետե յա, ետնան գյիդալանը ետը, էտ ախճիգյը ուրան շորերը կյնաս ա, քյինիս թաքավերեն կոշտը թա.

— Մտանիս քու պլատեն մարթիքյը եր ըն կալալ, ասե ինձ տան։ Հետէլ ուրան օրումը հալա տանան տուս եկած չի, ըտրա դարդան էլ վեչ մինը ճննչիս չի, թա հո՞ւ վա։

Թաքավերը հրցնիս ա.— Հո՞ւվա եր կալալ։

Էտ ախճիգյը էտ վեզիրին նշանց ա տաս, թա.— Էն ա եր կալալ։

Վեզիրը ուրթումն ա ուտես թա.— Ցրես եր չըմ կալալ, յրես ըսկի ճննչիս էլ չըմ, թա տա հո՞ւ վա, հիշտեղեցե յա՛։

Էտ ախճիգյը ըսես ա.— Դե վեր իտի յա, մին թոխտ կյիրի, թաքավերն էլ թող փչատե, վեր տու գյիդաս չըս, թա յրես հու վըմ, ինձ ճննչիս չը՞ս։

Վեզիրը թոխտը կյիրիս ա, թաքավերն էլ փչտես ա, տաս էտ ըխճրկանը։ Էտ ախճիգյը թոխտը տաս ա թաքավերեն, թա.— Էս վեր ինձ ճննչիս չի, գյիդաս չի յրես հո՞ւ վըմ, պա մուտանաս հուր անավ ա ծեռքը քցալ։

Թաքավերը մնաս ա ըրմացած էտ ըխճկանը խելքեն յրա։ Պիրիս ա կործը քննես, տսնաս պեռը հինչումն ա։ Ցիրեկվա սհաթի իրեքին պրոփեսորեն կախ տալին տրեղը ուրան վեզիրին ա կախ տաս, պրոփեսորեն ըզրգես։ Պրոփեսորեն քուրը ուզիս ա ուրան աղեն հետե, օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ընես։